

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱԲԱԿՈՒԹԻՒՆԻՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆ ԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

ՆԻՍՏԻ.

26 ՄԱՐՏ 1881



Կ. ՊՕԼԵՍ

1881

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԸԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
20 Մերձանց Բիւշտի ԷՖԷՆՈՒ Խանի Երրբեք քիւ 20

ԴԻԻԱՆԻ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Յ. Մերեւէմ-Գուլի էֆէնտի	Ա. Արեւիկայ
Ա. աքբէլ էֆէնտի Ալթուն Տիւրրի	Բ. »
Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Ա. Արեւիկայ
Միհրան էֆէնտի Չօպանեան	Բ. »

Ջեռնաստրեան դիւան

Յարաբերութեան դիւան

Յովհաննէս Բահանայ Մկրեան
Պապի էֆէնտի Պապօեան

Միհրան էֆէնտի Չօպանեան
Նշան էֆէնտի Օտեան

Դաստիակութեան դիւան

Իրաւաստրեան դիւան

Քէթէնու էֆէնտի Պէրպէրեան
Յարութիւն էֆէնտի Թիւրեան

Սեւեմար էֆէնտի Էքսէրճեան
Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան

Կայուածոց դիւան

Նախաձեռնութեան դիւան

Քրիստոստուր էֆ. Ղաղարոսեան
Յակոբ էֆէնտի Եմէնիճեան

Ղաղար էֆէնտի Հովուեան
Եղիազար էֆէնտի Մելիքեան

Համարակալութեան դիւան

Մինաս էֆէնտի Գափամաճեան

Յակոբ էֆէնտի Արշակ
Ստեփան էֆէնտի Փափաղեան
Պօղոս էֆէնտի Թորգոմեան

Խմբագրութեան դիւան
Կարապետ էֆ. Խլիւճեան
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան

Աքրահամ էֆէնտի Մուրատեան

Ելեւմտից յանձնախումբ

Քրիստոստուր էֆէնտի Ղաղարոսեան
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան
Միհրան էֆէնտի Չօպանեան

ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻ

Ն Ի Ս Տ Ի .

26 ՄԱՐՏ 1881

ՆՈՒՍԴԱՀ. — Տ. Մատթէոս եպօ. Իզմիրլեան (առժամեայ կարգեալ)
ԱՏԵՆԱՊԵՏ. — Յ. Մերեւէմ-Գուլի էֆէնտի

ԱՋԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ


ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

Ա. Վիճակ	Գումգաբու, Կետիկ փաշա Է. Գումգաբուի դուրս	47 Յ. Շիշմանեան Տօքթօր
1 Կարապետ եպօ. Սերոբեան Բ Պ	24 Գրիգոր Պէրպէրեան Բ 2	Իսկիւտար Ս. Կարապետ
2 Սիմօն եպօ. Սէֆէրեան Բ	22 Կարապետ Աղարդմաճեան	49 Միհրան Պահճէգափուլն
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ Պ	23 Համբարձում Մազպուլեան	50 Պօղոս Թորգոմեան Բ 2
4 Կարապետ Բ. Սէթեան	24 Մինաս Գափամաճեան	54 Տրդատ Փափաղեան Բ
Բ. Վիճակ	25 Սարգիս Աղարէկեան Բ Պ	52
5 Մատթէոս եպօ. Իզմիրլեան	26 Սենեքերիմ Մանուկեան Բ Պ	(Գ. Վիճակ)
6 Պօղոս Վ. Խօրտամեան Բ Պ	27 Բարթօղ Քիւրքճիւղաշեան Բ	Գասըմ Բաշա
7 Յովհաննէս Բ. Մկրեան	28 Գէորգ Աւստուլաճեան Բ	53 Գասպար Չէրազ Բ 2
8 Գրիգոր » Աճէմեան	29 Յ. Մերեւէմ-Գուլի	Բէրա
Գ. Վիճակ	30	54 Աբիկ Ունճեան Բ Պ
9 Յակոբ Վ. Ա. Փափաղեան Բ	31	55 Գրիգոր Սէլիմիճեան
10 Սահակ Բ. Տ. Սարգսեան Բ Պ	32	56 Գրիգոր Օտեան Բ Պ
11 Խորէն » Փէշլիվանեան	33	57 Միքայէլ Մօմճեան Բ 3
12	34	58
Դ. Վիճակ	35	59
13 Սուքրաս Բ. Ստեփանեան	36	60
14	37	61
15	(Բ. Վիճակ)	62
16	Պէշիկբաշ	Միշագլիւղ
Ե. Վիճակ	38 Ալիքան Խօրասանճեան	63 Յակոբ Նորասուկեան Բ
17 Խորէն Արքե. Նար Պէյ Բ 3	39 Բարսեղ Հալաճեան Բ	64 Տիգրան Երևուֆեան
18 Յովհաննէս Վ. Փափաղեան	40	65 Մկրտիչ Գազանճեան
19 Գարեգին » Թաթարեան Բ 2	Եկեղիցաբու	66 Նշան Օտեան
20	41 Մկրտիչ Քիւրքճիւղաշեան Բ Պ	67
Բ Բացակայութիւն առաջին :	42 Մարուգէ Յրէնկեան Բ Պ	Պէյգօգ Է. Ղալաթիա
Բ.2 Բացակայութիւն երկրորդ :	43 Պօղոս Էքսէրճեան	68 Միքայէլ Մամիկոնեան (Գ. Վիճակ)
Բ.Պ Բացկ. բանաւոր պատճառաւ :	44	Իսկիւտար Ս. Խաչ
	45 Սիմօն Յէլէկեան	Գուգլուճուգ Է. Իճատիէ
	46	69 Ստեփան Պէշիկճեան Բ 2
		70

Քառորդիկ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Մկրտիչ Մուրատեան		121 Ստեփան ֆախազեան
72	Կարին	Տիվրիկ
Նարյըզաբու	101	122 Նշան Գարազաշ
73 Յակոբ Եջմիշնիճեան	Քեօրանեա	Զէյրուն Է. Մարաշ
Եկեմիանայիկ Սամարիոյ	102	123
74	Անդրիանուպօլիս	Տրապիզօն
Թօփգափու	103	124
75 Յովհաննէս Մարգարեան	Նիկովիդիա	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Է. Ս.	104 Կարապետ Ս. Իւթիւճեան	125 Մելքօն Իսկէնտէրեան
Աստուածածին	Ակն	Տիգրանակերտ
76 Գարեգին Յ. Մէլիքեան	105	126 Միհրան Զօպանեան
Գուրուչեղմէ	Ղարանիսար	Վան
77 Ասփա Իկիտպաշեան	106	127
Հիսար Է. Պօյաճի զիւղ	Արաբկիր	Աղբամար
78	107 Կարապետ Խաչիկեան	128
Նոր զիւղ Է. Սրեկիա	Բաղէշ	Հայկալ Է. Այնթապ
9 Ղազար Հովուեան	108	129
Պարատ	Պրուսա	Սեբաստիա
80 Տելեմաք Էքսէրճեան	109 Քրիստոստուր Ղազարոսեան	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
81	Ե. դոկիա	Ռուսճուգ
82	110	131
Քարակեօմրիկ	Ամասիա	Կարս
83 Սեպուհ Թիւրապեան	111 Համբարձում Ալանճեան	132 Աբրահամ Յ. Այվազեան
84	Բալու	Զմշկաձագ
(Ե. Վիճակ)	112 Յովհաննէս Ազնաւորեան	133 Համբարձում Սարժըճէշիշեան
Սամարիա	Եղեսիա	Գաղատիա
85 Այլքսան Պէշիբեան	113 Յակոբ Իւթիւճեան	134
86 Եղիազար Մէլիքեան	Մանճըլըլիս	Ատանա
87 Մինաս Ճաֆճաֆեան	114	135
88 Նաղարէթ Շահպաղեան	Հանըն	Սդերդ
89 Յարութիւն Թիւլեան	115	136 Մատթէոս Ալէքսանեան
90 Յակոբ Արշակ	Երզնկա	Եօզղատ
91 Սեպուհ Թիւյսիւղեան	116 Ռէթէոս Պէրպէրեան	137 Լօղօֆէթ Պալեօղեան
92	Թեքիրտաղ	Մալաթիա
93	117 Տիգրան Գ. Սինանեան	138 Գէորգ Վարդանեան
94	Կեսարիա	Իզմիր
Խասգիւղ	118 Գէորգ Գըլըճճեան	139 Պապի Պապօեան
95 Առաքել Ալթուն Տիւրրիթ	119	Բ 2
96 Ռէթէոս Պէշիկեան	Քալըքեսեր	Եգիպտոս
97 Սարգիս Քալուքճեան	120	140 Աբրահամ Մուրատեան
98		
99		
100		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Մրազիր Թաղային մատակարարութեան . — Վիճարանութիւն շարունակութեան ի վերայ Ատենապետաց դիւանի Տեղեկագրին :



ԱՏԵՆԱՊԵՏ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԻ

Ս. Պատրիարք Հայրն բացակայ լինելով՝ Ատենապետ Էֆէնտին առժամեայ նախագահութեան կը հրաւիրէ Գեր. Տ. Մատթէոս Ե. պիսկոպոս Իզմիրեանն և Ատեանը կը բանայ ժամը 3 ին , ի ներկայութեան 25 երեսօխաւնաց , որոց թիւն 46 ի կը հասնի ի վերջէ :

պատրաստելու և միանգամայն տպագրութիւնն հասցնելու . ուստի , եթէ կուզէք , ձեռագիրը կը կարգամք ձեզ այժմ , եթէ ոչ՝ յաջորդ նիստին կը մնայ անոր ընդունելութիւնը :

ՁԱՏՆԵՐ. — Այո՛ , այո՛ , յաջորդ նիստին թող մնայ :

Հետեւաբար՝ ընդհանուր հաւանութեամբ յաջորդ նիստին կը թողուի նախընթաց նիստի ստենագրութեան վաւերացումը :

1.

Յետաճգում վաւերացման նախընթաց նիստի ատենագրութեան .

2.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախընթաց նիստին ստենագրութեան ձեռագիրն պատրաստ է . սակայն վեց աւուր միջոցը բաւական չէր զայն

Հրատարակիր Լօղօֆէթ ԷՖ. Պալեօղեանի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պալեօղեան Էֆէնտին ,

որ ճամբորդութեան պատճառաւ բացակայ է ,
ասկէ առաջ մասնաւոր նամակաւ մը տեղե-
կութիւն կուղէր իւր Բ. Ատենապետի սրտչո-
նին վրայ՝ որուն արժանի չէր դատեր զինքն .
այս կէտն՝ իրրեւ մասնաւոր խնդիր ժողովոյն
չը հաղորդեցի : Այս անգամ նամակաւ մը ե-
րեսփոխանութենէ կը հրատարի . ահա իւր նա-
մակն .

26 մարտ 1884

Մեծ. Տէր , Լոնտոն

Նկատելով որ բացակայութիւնս օր-
ըստ օրէ կերկարի և վերագարծի ժամս
անորոշ է , և չուզելով որ և է կերպով
Ձեր պատկառելի ժողովոյ զբաղմանց
արգելք լինիլ , կը փութամ ներկայ հը-
րատարագիրս մատուցանել , որոյ ըն-
դունելութիւնը խնդրելով ,

Մնամ միշտ անձնուէր
Լ. ՊԱԼԵՕՋԵԱՆ

(Յետ ընթերցման)

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդ՝ եթէ այս մասին
կարծիք յայտնել ուզող կայ՝ խօսք առնուլ կը
հրաւիրուի , եթէ ոչ՝ բուէի պիտի դրուի :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Հակառակ է
այդ ներքին կանոնագրին՝ որ ճանապարհոր-
դութեան պատճառաւ բացակայութիւնը չար-
զիլեր , հետեւարար այսպիսի սրտագայի մէջ
նոյն պատճառաւ Պալեօղեան էֆէնտիի հրա-
տարականը չկրնար ընդունուիլ :

ԱՅԵՆԱՊԵՏ. ԷՖ. — Թեթեւ բացատրու-

թիւն մը ստագային համար կրնայ օգտակար
լինիլ : Երբեք է թէ կանոնը ճամբորդութեան
պատճառաւ բացակայ եղող երեսփոխաններն
հրատարեալ չհամարիր , բայց երեսփոխան մը
կրնայ , իւր բացակայութիւնն երկար տեէ կամ
ոչ , իւր սրտչոնէն հրատարիլ :

Այս բացատրութենէն ետքը Ատենապետ
էֆէնտիին բուէի կը դնէ Պալեօղեան էֆէնտիի
հրատարականն որ ԶԸՆԴՈՒՆՈՒԻ ԺՈՂՈՎԷՆ :

3.

Գիր Տ. Յովնանեան քահանայի Մկրեան

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը յիշէր ,
անցեալ նամակն մէջ տեսնագրութեանց վաւե-
րացման ժամանակ երբ Տ. Մկրեան Հայրն զի-
տողութիւններ կընէր Եզիպտոսի խնդրոյն նը-
կատմամբ եղած հարցման վրայ , Դիւանս զի-
տեւ տուաւ թէ՛ այն զիտողութիւններն՝ առե-
նագրութեանց վաւերացման չվերաբերելով ,
սկէտք էր մասնաւոր կերպիւ հաղորդել զանոնք
Դիւանիս :

Աւասիկ այդ զիտողութիւնները սրտու-
նակող գիր մը , զոր Տ. Մկրեան Հայրն ուզ-
ղած է :

Մեծապատիւ Ատենապետ էֆէնտի
Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ

Անցեալ ԺԸՐԳ նիստի Ատենադրու-
թեան մէջ կարգացի Ղազարոսեան Գրիս-
տոստուր էֆէնտիի մի կարևոր առաջար-
կըն ի վերայ ազգային խնդրոց Եզիպտո-

սի . որոյ մէջ երկու սխալ սպրդած լի-
նեղն տեսնելով , ԺԹՐԳ նիստի մէջ կու-
ղէի զայն ուղղել , բայց Դիւանդ ըստ օ-
րինի գրաւոր տալ առաջարկելուն , կը
փութամ ներկայիւս կատարել :

Առաջին՝ Գրիստոստուր էֆ. Եզիպ-
տոսի խնդիրն 45,000 ոսկի կենթադրէ ,
որ եթէ տպագրական սխալ չէ , հարկ
է ուղղել 4,500 ոսկի , որ Եզիպտոսի Ա-
ռաջնորդական խնդրոյն յուղման գլխա-
ւոր շարժառիթն է , յորմէ զատ է շուրջ
չորս հազար ոսկւոյ հաշիւն , որ մատուց-
ուած է Կեդրոնական վարչութեան :

Երկրորդ՝ Գրիստոստուր էֆ. լսեր է
որ Եզիպտոսի քննիչ քահանային համար
500 ոսկի ծախք եղեր է . այս ևս սխալ
է , եթէ կարևորութիւն մ'ունի այսպի-
սի մասնաւոր լուսածներ պատկառելի
Ժողովոյդ ներկայել , պատուարժան պաշ-
տօնակիցս լաւ կանէր եթէ ստուգու-
թիւնն իմանալով հաղորդէր . վասն զի
Քննիչ քահանայն (որ ևս ինքս եմ) հա-
րիւր վաթսուէն և հինգ ոսկիի չափ ստակ
առած եմ ի պէտս իմ և Պատրիարքարանի
Եասաքճիին ծախուց . և ի վարձ եռամ-
սեայ տիւ և դիշեր շարաշար աշխատու-
թեանցս , ըստ որոյման Ամեն. Ս. Պատ-
րիարք Հօր , և հաճութեան Եզիպտա-
հայոց Ժողովոյն :

Նոյն ԺԸՐԳ նիստի Ատենադրու-
թեան մէջ կարգացի , որ երեսփոխան
Փափազեան Ս. էֆէնտիի ասկէց յառաջ
ըրած առաջարկութեան՝ (պատուիրակ
ղրկել առ ամենայն Հայոց Վեհ. Հայրա-
պետն ,) որ Ձեռնհասութեան և Իրաւա-
սութեան միացեալ դիւանաց յանձնուած

էր , ցարդ անպատասխանի մնալուն իմ
հիւանդութիւնս պատճառ եղած է . բայց
արդարութեան պարտք կը համարիմ
յայտնել , թէ յառաջ քան զիմ հիւան-
դութիւն այդ խնդրոյն վրայ նոյն միաց-
եալ դիւանաց կարծիքն ի գիր առնուլ ,
Արժ. Տ. Գարեգին վարդապետի յանձնը-
ւած էր , որ խնդրած էր առանձինն խոր-
հըրդածել նորա վերայ , և ցարդ իւր քո-
վը կը մնայ գեկտեմբեր ամիսէն ի վեր :

Մնամ յարգանք ,

Ազգ. Երեսփոխան
ՅՈՎ. Հ. ՔԶ. ՄԿՐԵԱՆ

23 Մարտ 1884
Բերայ

[Յետ ընթերցման]

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէր որ այս
գիրն երկու խնդրոց կակնարկէ . մին Եզիպտո-
սի ծանուցեալ սարտուց և քննիչ քահանային
ծախուց խնդիրն , և միւսը Ձեռնհասութեան
և Իրաւասութեան դիւանաց յուրած խնդիրն :
Արդէն այս վերջնոյն վրայ խնդիր յուղելու
հարկ չկայ , վասն զի Դիւանս գրած է բոլոր
նախաբննիչ դիւանաց փութացնել իրենց յանձ-
նուած խնդրոց տեղեկագիրն : Իսկ Եզիպտոսի
խնդրոյն նկատմամբ տեսնագրութեան մէջ
տեսնուած 45,000 ոսկին տպագրական սխալ
մ'է , հարցման հեղինակը 4,500 ոսկի ըսած էր
իւր գրոյն մէջ : Կը մնայ քննիչ քահանային
ծախուց խնդիրն , որոյ 500 ոսկի չլինելը կը
յայտնէր Տ. Մկրեան Հայրն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Այո՛ , ևս թէ
հարցմանս և թէ առաջարկութեանս մէջ 4,500

ուսի ըսած եմ, հետևարար յայտնի է թէ՛ 15,000 թիւը տարագրական սխալ է, և անցեալ նասի ատենագրութեան դիտողութեան և վաւերացման միջոցին ներկայ չկարացի գտնուիլ: Գալով քննիչ բաժանային 500 ոսկուց ծախուց խնդրոյն, շատերէն այնպէս ըսած էի և լրագրի մէջ ալ կարծեմ այնպէս կարգացի, այսու հանդերձ չըսի թէ ես գիտեմ, այլ ըսածիս վրայ բացատրութիւն խնդրեցի, և ուրիշ եմ որ այսօր պատճառու խիբ կրցինք բիչ մը պատասխան ընդունիլ: Իմ փնտրածս 1500 ոսկուց խնդիրն է. Մեսրոպ Եպիսկոպոս ի՞նչ բանի ծախսած է այդ գումարն, ազգային ի՞նչ իրաւունքներ արդեօք մասնաւորաց կոկորդն անցեր են այս գումարին ծախուց փոխարէն: Ես այնպէս խնայած և հաւատացած եմ որ Ս. Երուսաղիմաց կալուածներն յանուն Եգիպտոսի և Աղէքսանդրիոյ ազգային արկղին՝ մասնաւոր անձանց վրայ դարձեր և մասնաւորաց գոյք են եղեր. և արդ հիմա ալ լրագրի մէջ կը կարգամ և կիմանամ որ այն մասնաւոր անձը եկեղեցի պիտի շինէ եղեր: Ի՞նչ ըսել է այս...: Մէկ կողմանէ եկեղեցի շինել և միւս կողմէն Ս. Երուսաղէմի կալուածներն բռնութեամբ գրաւել և իրենց ուղածին պէս առնել ու ծախել, այն Երուսաղէմին կալուածներն և ստակներն՝ որոյ սրբաբնոյ բարձման համար ազգը կը մտայ այսօր: Ես ասոնք կուզեմ հասկնալ, իմ առաջարկութիւնս այս է, բայց վարչութիւնը դեռ պատասխան չբերեր զըմբողջարար, վերջընթեր նստին մէջ թէև խոստացաւ բերել, բայց չբերաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը սխալիք, Քրիստոսաւոր Էֆէնտի, վարչութիւնն անցեալ նիստին յայտարարեց թէ պատրաստ էր պատասխանելու իրեն յղեալ հարցմանց, որոյ մին էր և այդ Եգիպտոսի խնդիրն. բայց ժողովը թաղային օրինաց խնդրոյն ստիպողականութեան առջև, չուզեց լսել նոյն օրը վարչութեան պատասխանն ու յետագայ զայն: Ուստի մասնաւորութեմ այժմ խնդիրն, որ Տ. Մկրեան

Հօր դիտողութեան վրայ է, և վերջացնեմք: Այդ դիտողութեանց առաջին կէտն, ինչպէս ըսի, տարագրական սխալ մ'էր. երկրորդն ալ պարզուեցաւ կարծեմ, տրուած բացատրութիւններով և խնդիր չմնաց:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Շատ աղէկ ըսել է թէ այսօր եկած է այս խնդիրը, եթէ կարգը զայ կը խօսիմ:

4.

Հարցում Քափամաճեան Մինաս Էֆէնտիի Ամասիոյ խնդրոյն Գկատմամբ

Ատենապետ Էֆէնտին կը ներկայէ ժողովին Քափամաճեան Մինաս Էֆէնտիի հետեւեալ հարցազիրն:

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ

Ներկայիւս կառաջարկեմ որպէս զի ներքին գործոց խորհրդական Էֆէնտին բարեհաճի տեղեկութիւն և բացատրութիւն տալ թէ Ամասիոյ խնդիրն այժմ ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի և թէ Եղեսեան Եպիսկոպոսը Պօլիս բերել տալու մասին ի՞նչ որոշում եղած և որպիսի միջոցներ ձեռք առնուած են:

Ազգ. Երեսփոխան Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ 26 մարտ 1881

[Յետ ընթերցման]

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդ՝ պէտք է գիտնալ թէ ժողովն ի՞նչ կարծիք ունի այս հարցման մասին, կուզէ՞ յղել զայն ներքին գործոց խորհրդականին:

ԶԱՅՆԵՐ — Այո՛, այո՛:

Հետևապէս Գափամաճեան Էֆէնտիի հարցումն՝ հաւանութեամբ ժողովոյն՝ ԿԸ ՅՂՈՒԻ ներքին գործոց խորհրդականին:

5.

Հարցում Տ. Մաւրէնոս Եպիսկ. Իզմիրլեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրիշ հարցում մ'ալ կայ Տ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեանի կողմէն, որ ահաւասիկ:

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ

Ա. Գեր. Կրօնական Խորհրդականն

Այն կրօնական պայմանագիրը՝ զոր Աղթամարայ Սրբազան Կաթողիկոսն ըստորագրած է, զոր Սրբազան Պատրիարք Հայրը յատուկ տեղեկագրով մը Ազգային ժողովոյ 1875ի բացման ժ.թ. նիստին, որ ի 20 Փետրվարի 1876, ներկայած է, և որ կրօնային ատենի որոշմամբ և Սըրբազան Պատրիարք Հօր գրաւոր հաճութեամբ առաջարկուեցաւ Տ. Մկրտիչ Սըրբազանին որ ստորագրէ:

Կը լսեմք այժմ թէ՛ սոյն պայմանա-

գիրը ջնջելու կամ փոփոխութեան ենթարկելու առաջարկ և խորհուրդ կը ըլլայ:

Կը հարցնեմ արդ Գեր. Կրօնական Խորհրդականին թէ ստոյգ է այս առաջարկութիւնը:

Ազգ. Երեսփոխան Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

26 Մարտ 1881 ի Ղալաթիա

[Յետ ընթերցման]

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս հարցման մասին ի՞նչ կարծիք ունի ժողովն:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Յղուի, բայց պատասխանը շուտ գոյ:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ըստ որում յառաջիկայ նիստն վերջինը պիտի լինի՝ կաղաչեմ Կրօնական գործոց Խորհրդականին որ յառաջիկայ նստին բերէ իւր պատասխանը:

Ատենապետ Էֆէնտին ժողովոյ հաւանութիւնն ստանալով ԿԸ ՅՂԷ Տ. Մատթէոս Եպիսկոպոսի հարցումն առ Գեր. Խորհրդականն Կրօնական գործոց Ազգ. վարչութեան:

6.

Դաստիարակութեան վերաբերեալ տեղեկագիր ի Մէլիտինէէ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ասկից ստալ գաւառներէն դաստիարակութեան վերաբերեալ

տեղեկագրեր եկած էին որք յղուած են Գաստիրարակութեան ղրուանին . այսօր Մէլիտինէէն ևս եկած ըլլալով դաստիարակութեան վերաբերեալ տեղեկագիր մը այն ևս կը յղենք, տեղեկագրութեան մէջ անցունելով :

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր

Փետր. 4 թիւ , անցեալ տարւոյ մարտ 29 թուականաւ չրջարեւականի պահանջմանց յապաղկոտ ընթացքնիս տեղեկացնող վերջնական ծանուցագրերնիդ ստացանք , կը վուծամք ահա Ձեր ներողութիւնը խնդրելով պահանջուած տեղեկագիրը անմիջապէս յղել :

Նախ , Մելիտինէ բուն քաղաքը , ունի երեք դպրոց , որոնց մէջ կաւանդուին , հայկաբանութիւն , հին և նոր կտակարանի պատմութիւն , հայոց պատմութիւն , աշխարհագրութիւն , թուարանութիւն , տաճկերէնի և այլ հասարակ ընթերցանութեան դասեր , կան ինը տասը բաւական գիտնական դասատուներ , այս երեք դպրոցաց մէջ կը դաստիարակուին գրեթէ չորս հինգ հարիւր մանկուհիք , և ի շնորհս Ձեր անխոնջ ջանից ու քաջալերութեանց օր ըստ օրէ կը յառաջանան , ի պարծանս Ազգին :

Երկրորդ , Մելիտինէ ուրիշ քաղաքաց նման իւր չըլալայքը հայաբնակ գիւղեր չունի , միայն կայ հին քաղաքը , որ գրեթէ երկու ժամ հեռու է բուն քաղաքէն , միւս Օրտուղի անուն գիւղ մը , սոցա իւրաքանչիւրին մէջ կայ միայն հինգ վեց տուն հայ , աս սակաւու-

թենէ յայտնի կերելի որ զատ վարժարանի բացման կարևորութիւն չի կայ . մի քանի տղայք որ կան , նոքա ալ վանքին ու եկեղեցւոյն քահանաներէն կը դաստիարակուին :

Արդ ներկայացնելով մեր այս տեղեկագիրը Ձեր Սրբազնութեան և շքեղաշուք անդամոց Երեսփոխանական ժողովոյ ,

Մնամք աղօթող

ՍՐԱՊԻՈՆ ԵՊԻՍ. ՄԵԼԻՏԵՆՆԻՈՅ

1881 փետր. 25 ի Մելիտինէ

[Յետ ընթերցման]

Սոյն տեղեկագիրն ևս կը ՅՂՈՒԻ Գաստիրարակութեան ղրուանին 'ի նախաքննութիւն :

7 .

Առաջարկութիւն Ստեփան ԷՅ. Փափագեանի .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Փափագեան Էֆէնտի կողմէ հետեւեալ առաջարկութիւնն եկած է :

Իւրաքանչիւր Երեսփոխան անշուշտ կը փափաքի տեսնել որ Պատրիարքարանի մէջ վարչական կազմակերպութեան նոր օրինաց ուժով կտրուկ և դործնական ընթացք մը տիրէ և ամենայն տնօրէնութիւնք ի նպատակ ազգային շահուց լինին : Վստահ եմ որ նորընտիր վարչութիւնն պիտի ջանայ այս փափաքն պատ-

կել , Այսու հանգերձ հետևեալ քանի մը կէտերն , զորս կարեւոր կը դատիմ Պատրիարքարանի բարեկարգութեանն համար , արժան կը համարիմ Երեսփոխան Տեարցողադարութեան ներկայել :

1. Պատրիարքարանի ամեն պաշտօնեայք , մեծէն մինչև փոքրը , քննութեամբ սահմանուին , և իրենց պաշտօնին ձեռնհաս և միանգամայն Ազգին վիճակին վրայ դուժ և խիղճ ունեցող անձինք ըլլան . և Պատրիարքարանը երկրորդական և աւելորդ պաշտօնեաներով չխրունուի :

2. Պաշտօնէից այժմեան ապրուստին բաւական եղող թոշակ սահմանել , և ապագային համար՝ հանգստեան թոշակի օրէնքն պատրաստել այժմէն և ներկայել առ Ազգային ժողով :

3. Իսպառ դադրին նուիրատուութիւնք , դրամականք և ոչ-դրամականք : Պատրիարքարանի հետ յարաբերութիւն ունեցող ազգայինք , ինչ կարգէ և աստանէ և ըլլան , առաջնորդ , վանահայր և այլ ամեն անձն՝ որ ազգային որ և է պաշտօն կը վարէ կամ վարելու հետամուտ է , և կամ Պատրիարքարանի մէջ դործ մ'ունի , ինչպէս նշանուաք ընել , հրամանի և ծանուցագիր ստանալ ևն , պարտաւոր են սահմանեալ ուղղակի և անուղղակի տուրքերն միայն վճարել , և ո՛չ որ և է ձեռի կամ անունի տակ նուէր տալ որ և է պաշտօնէի : Ձեւ ուղեր մանրամասն բացատրել . զի իւրաքանչիւր ոք

կրնայ մտաբերել թէ այս առաջարկութեանս նպատակ ունիմ ոչ միայն ուղղակի և անուղղակի տրոց հաւաքման կամ ճշդութեամբ պահանջման արգելքը բառնալ , այլ և պաշտօնեաներն որ և է կաշկանդուած զերծ պահել և իրենց խղճին ու պարտուց ճանաչման մէջ ազատ տեսնել :

4. Վերջանան թէ բերանացի և թէ գրաւոր բարեխօսութիւնք և յանձնարարութիւնք Պատրիարքարանի առ Բ. Գուռըն կամ Նախարարս Տէրութեան՝ անհատից համար պաշտօն , պատուանշան և պատուաստիճան խնդրելու մասին . բայց երբ անհատ մը հարստահարութեան , կամ անիրաւութեան կամ զրպարտութեան ենթարկեալ է , այնպիսին անշուշտ և անյապաղ ներկայանալի է կառավարութեան ուշադրութեան և հայրական խնամոց : Այս կերպով Պատրիարք և Վարչութիւն ոչ միայն կը զօրանան էական շահուց մասին կատարած միջնորդութեան մէջ , այլ և կազատին խել մը անձանց ձանձրութենէն , և անոնց հաճոյ կամ անհաճոյ երևնալու անհանգրստութենէն և մանաւանդ տարապարտ բամբասանքէ :

Ինձ կը թուի թէ այս չորս կէտերն հաստատելի այլ բարեկարգութեանց կարգին կարևոր տեղ մը կը գրաւեն . և կը յուսամ որ ինձի պէս պիտի խորհին Երեսփոխան Տեարք , և շնորհ պիտի ընեն զասոնք յղել Վարչութեան ինկատառումն , և յանձնարարել որ Վարչա-

կան ներքին ընթացից կանոնադրին ծրագրին շուտով պատրաստելով մատուցանել առ Ազգային Ժողով :

Ազգ. Երեսօրհան

Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆ

26 Մարտ 1881

[Յետ ընթերցման]

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս առաջարկութեամբ փախազեան էֆէնտիի նպատակն է իւր թուած շորս կէտերուն վրայ Վարչութեան ուշադրութիւնը հրաւիրել և յանձնարարել նմա որ ներքին ընթացից կանոնադրի ծրագրին պատրաստութեան մէջ զանոնք ալ նկատողութեան առնու, և ըստ այնմ պատրաստեալ ծրագիր մը ներկայէ անյասպաղ Ազգ. Ժողովոյս :

ԷՔՍԵՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Ազգային Ժողովն ունի արդէն Վարչական ծրագիր մը . այս ծրագրին համեմատ նոր Վարչութիւն մը կազմած է, որուն վրայ վստահութիւն ունի : Ամեն անգամ ելնել Վարչութեան նոր հրահանգ տալը՝ Վարչութիւնը անկարող նկատել է : Թողուցէք որ այդ բաները ինքը խորհի և գործէ, և եթէ իւր գործողութեանց մէջ թերութիւն տեսնէք, այն ատեն ձեր դիտողութիւնները ըրէք, մանաւանդ որ Վարչութեան ամեն վայրկեան սցապէս հրահանգ տալը պարզապէս փախազեան ալ կը դալչի : Մեր միտցն կրնամք ըսել Վարչութեան որ իւր ներքին ընթացից կանոնադրը շուտ պատրաստէ ու բերէ . բայց ի՞նչ հարկ կայ ըսելու որ սա կէտն տլ նա կէտն ալ անոր մէջ դիր . փախազեան համաձայն չէ այսպէս վարուիլը :

ԳԱՓԱՄԱՋԵԱՆ Մ. ԷՖ. — Տէլէմար էֆէնտիին մասամբ իրաւունք ունի, սակայն երբ

խնդրոյն խորը մտնենք, կը տեսնենք որ իւր ըսածները սեղմելու բնութիւնն ունին այն ազատութիւնն և իրաւունքը, զոր իւրաքանչիւք երեսօրհանն ունի հարցում կամ առաջարկ բերելու : Երբ երեսօրհանն մը հարցում մը կամ առաջարկութիւն մը կը բերէ Ժողովոյս և Ժողովն կընդունի՝ երեսօրհանին այս մասին ունեցած իրաւունքը կը հաստատուի : Ուստի աղէկ կը լինի որ երեսօրհանաց ազատութիւնն սեղմող խօսքեր չըլլան. սակայն Վարչութիւնը փրկելն և անոր ոյժ տալն ամենուս պարտքն է :

ԵՆՈՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Երբ երեսօրհանական Ժողովս արտօնութիւն ունի օրէնք շինել՝ այս Ժողովոյ անգամք ազատ են օրինաց ծրագիր բերել և առաջարկել : Թէպէտև մեր Սահմանադրութեան մէջ գծուած չէ թէ ո՞վ պիտի բերէ օրինաց ծրագիրներն՝ բայց ընդունած ենք թէ Պատրիարք, Վարչութիւն և Երեսօրհանք իրաւունք ունին ու է ծրագիր առաջարկելու : Ուստի երեսօրհանի մը առաջարկութիւնը չկրնար վիրաւորել զգացումն Վարչութեան, որ եկած առաջարկութիւններն մի առ մի լսելն ետքը, ազատ է իւր կարծիքն յայտնելու, և այն առաջարկութեանց համակերպելու, եթէ արժան դատէ, կամ իւր պատճառներն յայտնելու, եթէ պատշաճ չը դատէ համակերպիլ :

Կը մնայ այժմ իմ կարծիքս յայտնել փախազեան էֆէնտիի շորս առաջարկութեանց վերայ : Կրնամ ըսել թէ առաջին երեք կէտերն արդէն Վարչութեան ընթացից և փախազեանաց համաձայն են : Գալով չորրորդին՝ բաւական բարեխօսութեան կարօտ է : Զկայ Վարչութիւն մը որ իրեն ստորակարգեալներու համար սրտուանշան չխնդրէ . Պատրիարքարանն պատուանշան կը խնդրէ այն եկեղեցականաց և աշխտհականաց համար որոնք ազգին ծառայութիւններ ըրած են, և եթէ ասոնցմէ դուրս անձանց համար ալ ընէ, արդէն Բոլոն չընդունիր այդպիսեաց պատուանշան չնորհելն : Ըսել կուզեմ թէ չորրորդ կէտն ար-

դէն ինքնագոյ բան մ'է, բայց միւսներն կըրնան նկատողութեան առնուիլ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Օրինական դիտողութիւն ունիմ . խնդիր չէ այս, հարցում մ'է, անգամ մը խօսուելէ ետքը պէտք է վերջացնել :

ԷՔՍԵՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Կը պնդեմ առաջարկել միայն Վարչութեան որ աճապարէ իւր ներքին կանոնադրին շինելու բերելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բաւական խօսք ուղղներ կան, սակայն ըստ որում երեսօրհանաց վրայ անհամբերութեան նշաններ կը տեսնեմ, նախ՝ վիճաբանութիւնը շարունակելու մասին Ժողովոյ կամբը պիտի հարցնեմ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ իրր տէր առաջարկութեան :

ԵՆՈՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — (Ատենապետ Ազգ. Վարչութեան) յանուն Վարչութեան կը խնդրեմ, որ խնդիրն յղուի առ Վարչութիւն, և կը յուսամ թէ նորա պատասխանը Ժողովը կը դուստնէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն ըստ որում առաջարկութեան եզրակացութիւնն է՝ յղել Վարչութեան, և Երեսօրհան էֆէնտի ալ՝ յանուն Վարչութեան՝ կը խնդրէ որ յղուի, միայն անոնց խօսք պիտի տամ, որ յղման դէմ խօսիլ ուզեն :

Յղման դէմ ոչ որ խօսք ուղեւով Ատենապետ էֆէնտի Ժողովոյ հաւանութեամբ կը Յղէ փախազեան էֆէնտիի առաջարկն առ Վարչութիւն :

8 .

Տեղեկագիր Յարաբերութեան դիւանին Ղալաթիոյ բաղեցուց առ Ազգ. Ժողովն մատուցած հանրագրոյն մասին

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յարաբերութեան դիւանն իւր տեղեկագիրը ներկայած է Ղալաթիոյ թաղեցուց առ Ազգ. Ժողովն մատուցած հանրագրոյն վերաբերութեամբ : Այս տեղեկագիրն այսօրուան ատենադրութեան պիտի կցուի, իւր կարգին օրակարգ ըլլալու համար :

9 .

Պատասխանի Վարչութեան կիլիկիոյ կաթողիկոսական խնդրոյն նկատմամբ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը մնայ այժմ Վարչութեան նկատմամբ պատասխաններն լսել : Ուստի կը հրաւիրեմ զՎարչութիւնն որ շնորհ ընէ պատասխանել՝ նախ Կիլիկիոյ խնդրոյն նկատմամբ :

ԵՆՈՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — (Ատենապետ Ազգ. Վարչութեան) Վարչութեան և Կիլիկիոյ Ամեն. Սրբազան Կաթողիկոսին մէջ աեղ բանակցութիւններն այն աստիճան յառաջ գնացած են որ այս խնդիրն ազգին բաղձանացը համաձայն լուծում առնուլու կէտին մօտեցած կրնայ համարուիլ . ուստի ներեցէ՛ք եթէ այսօր չկարենամք ներկայել պահանջուած թղթակցութիւնն, որ խնդիրն վերջանայ և յետոյ ներկայացնեմք թուղթերը :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Շատ լուր կըր-

նայի ընդունել Վարչութեան պատասխանն՝ եթէ բանակցութեանց այս աստիճան յառաջ երթալն ետքը ուղուած ըլլային այդ թուղթերն, բայց այսպէս եղած չէ: Դեռ այս խնդիրը չկար, երբ երեսփոխան մը պահանջեց որ այդ թուղթերը ներկայացուին ժողովին: Սրբազան Պատրիարքն ալ խոստացաւ և յանձնեց զանոնք Ազգ. ժողովոյ ղեկանին՝ ուսկից վերստին ուղեց Վարչութիւնն զանոնք՝ որպէս զի սերտէ խնդիրն որ շատ հինցած էր: Բայց այժմ՝ պատճառ մը չկայ որ այդ թուղթերն Պատրիարքարանի մէջ մնան, պէտք է որ հոս գան:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Իբրև տէր հարցման երկու բառով բացատրեմ թէ ի՞նչ էր իմ առաջարկութեան բուն ոգին. երբ խնդիրն երկարեցաւ և կնճառտեցաւ Վարչութեան և Կիլիկիոյ կաթողիկոսին մէջ որ չէր ընդուներ Վարչութեան առաջարկներն և որոշումներն, խնդիրն այլ ևս անորոշ վիճակի մը մէջ չարհելու համար ուղեցի որ այդ թուղթերն ներկայացուին Ազգ. ժողովին, որովհետև ազգը կուզէր վախճան տալ այդ խնդրոյն: Այժմ որ Վարչութիւնն կըսէ թէ Կիլիկիոյ կաթողիկոսին հետ բանակցութեան մէջ է և բանակցութիւնն վերջանալու մօտ է՝ թուղթերուն յապաղումն կրնայ ընդունուիլ. սակայն կարևոր կէտ մը կայ զոր Վարչութիւնն յայտարարելու է, այն է թէ Կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրն Ազգ. ժողովոյ որոշմանց համաձայն պիտի կարգադրէ: Կարելի է որ Վարչութեան առջև դժուարութիւններ ելնեն, բայց երբ ինք յայտարարէ թէ պիտի կրնայ այս խնդիրն լուծել, թող տանք իրեն որ գործէ, միայն թէ, ինչպէս ըսի, այսօր պէտք է յայտարարէ յատենի ժողովոյ թէ ինք այս խնդրոյն մէջ ժողովոյ նախկին որոշմանց համաձայն պիտի գործէ և անոնց սահմանէն դուրս չպիտի ելնէ, այն ատեն ոչ միայն ես այլ ամենքս ալ գոհ կը լինինք և կը մաղթենք որ Վարչութիւնն յաջողի այս խնդիրը լուծելու:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Ց. Մ. ԵՊԻՍ. — Ընդունեցի Փափագեան էֆէնտիի յայտարարութիւններն. բայց կը յիշեցնեմ որ անցեալ տարի Խառն ժողովն դեռ չուժուած՝ Կիլիկիոյ կաթողիկոսին վերջնագիր մը դրկեց, որուն մէջ Ազգ. իշխանութիւնն ըսած էր որ եթէ դարձեալ չհնազանդիր Ազգ. ժողովոյ որոշմանց, Ազգ. իշխանութիւնն պէտք եղածն ի գործ պիտի դնէ:

Այս վերջնագրոյն վրայ էր որ թեմական ժողովոյ կազմութեան խնդիրն երեւան ելաւ, ինչպէս նաև Կաթողիկոսին Պոլիս գալն ալ այդ վերջնագրոյն արդիւնքն է: 1871 ին և 1872 ին այնքան զրազեցուց զմեզ և դարձեալ մերժեց մեր պայմաններն և այսօր ալ կը մերժէ. արդ՝ կամ պէտք է գործադրէ ինքն Ազգային ժողովոյ որոշումներն և կամ՝ մենք ընդունելու ենք որ Ազգային ժողովն իր խաղաղութիւնն է. և ոչ ոք կրնայ ընդունիլ զայս: Ինչ որ լինի ազգային պաշտօնեաց, եկեղեցական թէ՛ աշխարհական, սրբաւոր է գործադրել Ազգ. իշխանութեանց որոշումները. այս է Հայաստանեայց եկեղեցւոյ օրէնքը: Կզգամ խնդրոյն ծանրակշիռ վիճակի մէջ լինելն, բայց չեմ յուսար որ թուղթերուն հոս գալն Վարչութեան գործերուն դէմ արգելք ըլլայ, հարկ է գտնէ տասն և մէկ տարուան մէջ եղած յարաբերութեանց թուղթերը ժողովել, և զանոնք աչաց առջև տնկնալով ստատել Վարչութեան ընկեր տնօրէնութեան. սակայն զիտանաք թէ իրարու յաջորդող Պատրիարքներ, Վարչութիւններ շարունակ նամակներ գրած են. տեսնենք ի՞նչ են գրուածներն և ի՞նչ պատասխաններ առնուած են: Աւտի կը կըրկենեմ որ Ազգ. ժողովն իւր աչաց առջև պէտք է ունենայ այդ թուղթերն, որպէս զի Կիլիկիոյ վիճակին թշուառութիւնը կատարելապէս կարենայ տեսնել և ըստ այնմ դարման խորհիլ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Կը ձայնակցիմ:

ԵՌԻՍՈՒՑԵԱՆ Ց. ԷՖ. — Կը ցախիմ որ մեր նախորդ ընկեր Տ. Մատթէոս կախկոսոս իզ-

միրլեան, խնդրոյն վրայ լաւ տեղեկութիւն ունենողով հանդերձ, իմ՝ ըրած յայտարարութիւններս բաւ չհամարեց և թուղթերուն հոս գալուն վրայ պնդեց: Բաւական էր որ, ինչպէս Իզմիրլեան Սրբազան ալ ըսաւ, Վարչութեան անդամք իրենց առջև ունենային այդ թուղթերն խնդիրը լաւ սերտելու համար: Կըսեն թէ այդ թուղթերն Ազգ. ժողովոյ սեղանին վրայ դրուելու են: Բայց Վարչութիւնն ալ կըսէ թէ պատշաճ չգտաւք այդ թուղթերը ժողովոյն ներկայել այն միջոցին՝ յորում բանակցութիւնն շարունակելու վրայ է և խնդիրն ազգային շահուց համաձայն լուծելու կաշխատուի: Կը մնայ այժմ յայտարարել որ Վարչութիւնն բնաւ չպիտի շեղի այն որոշումներէն զորս Ազգային ժողովն տուած է այս խնդրոյն նկատմամբ [Շատ աղէկ, շատ աղէկ]: Բայց եթէ երբէք Ազգ. ժողովոյ որոշմանց անհամաձայն բան մ'ընելու պէտք տեսնէ, Վարչութիւնն չվարանիր Երեսփոխանական ժողովոյն դիմելու [Հաւանութեան նշաններ]: Վստահելիք որ երբ Վարչութիւնը կարծէ թէ հարկ կայ փոփոխութիւն մ'ընելու, կանխաւ ձեզ պիտի դիմէ:

ՋԱՅՆԵՐ. — Գոհ ենք, գոհ ենք այս բայտարարութիւններէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եւսուֆեան էֆէնտիի բացատրութիւններէն ընդհանրապէս գոհութիւն կը յայտնեն Երեսփոխանք, և հետեւաբար խնդիրը փակելու վիճակին կը հասնի. սակայն ըստ որում Մատթէոս Սրբազան խօսք ուղած էր արդէն, բռնէն առաջ խօսք պիտի տամ իրեն՝ իբրև հարցման հեղինակի՝ ոյն պայմանաւ որ Վարչութեան տուած ստահութեան վրայ մասնաւորէ իւր խօսքերն:

ՋԱՅՆԵՐ. Գուէ՛, քուէ՛:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իրաւունք ունիք քուէ՛

խնդրելու, սակայն երբ ձեր Գիւտնը հարկ կը տեսնէ բռնէն առաջ խօսք մը տալու հարցման հեղինակին, կրնաք, կարծեմ, ներողամիտ գտնուիլ իրեն, վստահ ըլլալով որ խնդրոյն մէջ չփոթութիւն չթողու և բարւոք շուժման միջանգելու նպատակաւ է այն:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Ց. Մ. ԵՊԻՍ. — Վարչական խորհրդոյ Ատենապետ էֆէնտիի յայտարարեց թէ Ազգ. ժողովոյ որոշումներէն չպիտի շեղի Վարչութիւնը. բայց բան մը կայ սակաւ. խնդիրն աշխարհական պաշտօնէի մը վրայ չէ. կրօնական պաշտօնեաց մ'է ենթակայն, և եթէ օրինաւորութեան մէջ պիտի գործենք՝ Կրօնական խորհրդականն ևս պէտք է յայտարարէ թէ կրօնական պայմաններն ալ անփոփոխ պիտի մնան, և եթէ փոփոխութիւն հարկ ըլլայ այդ պայմաններուն մէջ, հոս պիտի դիմէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարծեմ թէ Տ. Մատթէոս Սրբազանի փնտռած կէտն արդէն Վարչութեան Ատենապետ էֆէնտիին յայտարարութեան մէջ կը սրբունակէ, վստահ լինելով Վարչութեան, որուն մէջ է Կրօն. Խորհրդական Սրբազանը, յայտարարեց թէ ժողովոյս որոշմանց համեմատ պիտի գործեն, և եթէ երբէք այդ սկզբանց անհամաձայն կարգադրութիւն մ'ընել հարկ լինի, ժողովոյս պիտի դիմեն: Այս բացատրութիւնն աւելի ընդարձակ կը թուի և մասնաւորելու հարկ չմնար. ուստի վիճարանութեան փակումն քուէի պիտի դնեմ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ի՞նչ բանի համար:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կիլիկիոյ խնդրոյն վրայ պիտի խօսիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երբ ձեզի խօսք տամ, հարկ պիտի լինի ուրիշներուն ալ խօսք տալ,

որովհետև ձենէ զատ երեք երեսօխանք ևս կան խօսք սզող, սակայն կը դիտեմ որ երեսօխանաց մի մասին համբերութիւնն սպառած է և վիճարանութեան փակումը կուզէ . ոստի ժողովոյն կամացը պիտի դիմեմ :

Ատենապետ էֆէնտին ժողովոյ քուէն խնդրելով այս մասին, ժողովը վիճարանութեան փակումը ԿՈՐՈՇԷ մեծամասնութեամբ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդ՝ Կիլիկիոյ խնդրոյն մասին վիճարանութիւնը փակուած է : Վարչութիւնն յայտարարեց թէ՛ իւր և Կիլիկիոյ կաթողիկոսին մէջ բանակցութեան նիւթ եղած խնդիրն Ազգ. ժողովոյ որոշմանց համաձայն պիտի կարգադրէ, և թէ՛ երբ այն որոշմանց հակառակ վարուիլ հարկ ըլլայ, Ազգ. ժողովոյ պիտի դիմէ :

Այս բանաձևով երեսօխանաց քուէն պիտի խնդրեմ հասկնալու համար թէ՛ ժողովը դ՞՞ է, թէ՛ ոչ, Վարչութեան տուած բացատրութեանէն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այդ բանաձևին նկատմամբ խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կրնաք խօսիլ :

ՓԱՖԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — 1872 Մարտ 2 թուականու Խրիմեան սրբազանին առ վեհ. կաթողիկոսն զրած նամակին մէկ պարբերութիւնը կարդամ :

(Կը կարդայ)

Իութիւնը հոս է . յարաբերութեան մասին բացարձակողէս յայտարարուիլ պէտք է Վարչութեան կողմէն, ասպ թէ՛ ոչ մեծ խնդիր կը

դառնայ ասպազային մէջ, զի ինչ որ է Ազգ. մարտի խնդիրն, նոյնն է նաև Կիլիկիոյ խնդիրը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիւտնը կը կարծէ թէ Վարչութեան ըրած յայտարարութիւնն աւելի ընդարձակ է : Վարչութիւնն յայտարարեց թէ Կիլիկիոյ կաթողիկոսութեան խնդիրն Ազգ. ժողովոյ որոշմանց համաձայն պիտի լուծէ, իսկ եթէ ուրիշ կերպ լուծումը տալ հարկ ըլլայ այս խնդրոյն՝ ժողովոյս կամացը պիտի դիմէ :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Վարչութեան այս յայտարարութիւնն կրօնական պայմաններուն համար չեմ ընդունիր :

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Վարչութիւնն Ազգ. ժողովոյ որոշումներէն չպիտի շեղի :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Կրօնական մասին որոշակի պէտք է ըսէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ի՞նչ կը նշանակէ այդ երբ Վարչութիւնը կը յայտարարէ թէ խնդրոյն լուծմանը համար պիտի համակերպի Ազգ. ժողովոյ որոշմանց, միթէ՞ մեր Վարչութիւնը կըրօնական մասին պատասխանատու չէ և անկէ դուրս պայմաններուն համար պատասխանատու կը ճանչեմք մեք զինքը : Վարչութիւնն իւր յայտարարութեամբ սրտաւոր է գալ Ազգ. ժողովոյ կամքը հարցնել երբ խնդրոյն կարգադրութեան մէջ Ազգ. ժողովոյ որոշմանց վրայ բարեփոխման մը հարկ տեսնէ : Եւ ըստ որում Ազգ. ժողովին անժխտելի իրաւունքն է իրեն առաջարկեալ բարեփոխումն ընդունիլ կամ մերժել, ի՞նչ հարկ կայ այն մասնաւորութեանց, որոց վրայ կը պնդէք :

Այս բացատրութիւնները զամենքդ ալ հանդարտեցնելու բաւական պէտք է լինին . Ուստի վարչութեան յայտարարութիւնն հե-

տեւեալ բանաձևով կամփոփեմ, և անոր վրայ ժողովոյ կարծիքը կը խնդրեմ :

Վարչութիւնը կը յայտարարէ որ իւր և Կիլիկիոյ Ամեն. կաթողիկոսին մէջ բանակցութեան նիւթ եղած խնդիրն Ազգ. ժողովոյս որոշմանց համաձայն պիտի կարգադրէ, և թէ՛ երբ այդ որոշմանց սահմանէն շեղելու հարկ տեսնէ, ժողովոյս կամաց պիտի դիմէ :

Ատենապետ էֆէնտին սոյն բանաձևով քուէի կը դնէ և ժողովն մեծամասնութեամբ ԳՈՂԱՑՈՒՑԻՉ ԿԸ ԳՏՆԷ Վարչութեան յայտարարութիւնը Կիլիկիոյ խնդրոյն նկատմամբ :

10.

Պատասխանի վարչութեան եզրակացութիւնը

Ատենապետ էֆէնտին կը հրաւիրէ զՎարչութիւնն եզրակացութիւնը խնդրոյն վրայ տեղեկութիւն տալու :

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — [Ատենապետ Ազգ. Վարչութեան] Կը մնայ այժմ պատասխանել Մեսրոպ կաթողիկոսի խնդրոյն նկատմամբ ժողովոյն հարցման : Յաւալի է որ Մեսրոպ կաթողիկոսը՝ լու գիտնալով հանդերձ թէ ինչ են իրեն դէմ եղած ամբաստանութիւններն, առ ոչինչ համարեք Վարչութեան հրամանն, որով ազգային իշխանութիւնն 1879 տարւոյ նոյեմբեր ամսու մէջ պաշտօնանկ ըրեր է զինքը և այս մասին ո և է գանգատ կամ դիտողութիւն չէ ըրեր Մեսրոպ կաթողիկոսը : Բայց երբ զինքն Պոլիս հրաւիրող Պատրիարքական հրամանին չէ համակերպեր, Վարչութիւնն

ստիպուեր է Բ. Գրան դիմել ի գործադրութիւն Պատրիարքարանի հրամանին : Այն ատեն Մեսրոպ կաթողիկոսին իւր անձնական գործերն առանց կարգադրելու Պոլիս չի կարենալ գալը պաշտօնապէս կը ծանուցուի Վարչութեան : Այս անձնական գործ ըսուածն 1472 օսկոյ խնդիրն ըլլալը կը յայտնուի . որու համար քննիչ Տ. Մկրեան Հայրն արդէն իւր տեղեկագիրն բերած էր, և զնոյնն հաստատած Տէր Սահակ Հայրն :

Այն միջոցին նոր Վարչութիւնը կուգայ, կը տեսնէ որ մինչև որ Մեսրոպ կաթողիկոս մայրաքաղաքս չբերուի՝ այս խնդիրն չպիտի լուծուի, անմիջապէս Եզրակացութիւնը Խտիվին դիմելով Մեսրոպ կաթողիկոսի մայրաքաղաքս գալը կը խնդրէ : Այս տնօրէնութեամբ Մեսրոպ կաթողիկոս եկաւ Պոլիս, Վարչութիւնն ամէն մէկ կէտի վրայ բացատրութիւն ուղեց իրմէ և ինքն ալ խոստացաւ տալ, եթէ իրմէն գրով պահանջուի : Այն վայրկեանն ուր խնդիրն դատաստանի պիտի ենթարկուէր՝ Վարչութիւնն տեսաւ որ խնդիրը երկու գլխաւոր կէտերու վրայ էր . առաջինով ամբաստանուած էր իբրև առաջնորդ ունեցած ընթացիցը համար և երկրորդով՝ հաշուց մասին համար : Գտտն պիտի տեսնուէր ազգ. դատարանաց առջև, և երբ Պատրիարքարանն այս դատարանաց կազմութեամբն զրազած էր, Մեսրոպ կաթողիկոս կէնէ գանգատներ կընէ թէ ինչո՞ւ չտեսնուիր իւր դատը, թէ իւր դատն Գահիրէ տեսնուելու, է որովհետև հոն դատին պիտանի տեսարաններ կան եղեր : Մեսրոպ կաթողիկոսին պահանջած քննութիւնն արդէն գուտաւին մէջ եղած է . իրեն դատասխանն այսօր Վարչութիւնն է որ կարող է զարժանն տնօրինել և տեսարանները հոս բերել տալ եթէ հարկ ըլլայ : Ահա այս վիճակին մէջ կը գտնուի խնդիրն : Յաւալի է սակայն որ Մեսրոպ կաթողիկոսս հրատարակաւ կեղծութիւններ չընէ ինչո՞ւ իւր տեղն ուրիշ առաջնորդ կը զրկուի . կերևայ որ խըն-

դիրն այնքան զբաղեցուցած է իւր միտքն որ բողոքովին մտայեր է տարի մ'առաջ նախորդ Վարչութեան օրով պաշտօնանկ լինելն : Ահա այս սրտածառաւ Վարչութիւնը կարեւորութիւն չտալով նորա բողոքներուն , կ'զբաղի խնդիրն օրինաւորապէս լուծելու համար , ձեռնհաս դատարանին ներկայացնելու ամբաստանադիրն պատրաստել , և գոհ կըլլայ եթէ Մեսրոպ եպիսկոպոս կարենայ ինքզինքն արդարացնել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Չեմ սխալիր եթէ ըսեմ թէ Վարչութիւնը տեղեկութիւններ տուաւ մինչդեռ մեր ուզածն այս խնդրոյն վերաբերեալ թուղթերն էր , որոյ վրայ հարկաւ ժողովս բան մը պիտի ըսէ : Մեսրոպ եպիսկոպոսի պաշտօնէ դադարումն և ըն. տարբեր խընդիրներ են : Մեծք գիտենք որ Եզխարտոսի մէջ 30—40 հազար ոսկւայ խնդիր մը կայ , որուն քննութեանը համար դային նաև Մկրտիչ եպիսկոպոս և յետոյ Ներսէս եպիսկոպոս մենք ահա այս անցած բաներուն թուղթերն կուզենք և հետևարար կը խնդրենք որ Վարչութիւնն շնորհ ընէ այդ տեղեկագրերն իւր տարեկան Սպիտակ տետրին մէջ անցունել և յառաջիկայ բայման բերել որպէս զի գիտնանք թէ խնդիրն ուսկից ծագած է և ուր յանգած է :

ԳԱՓԱՄԱՋԵԱՆ Մ. ԷՖ. — Շատ իրաւունք ունի Փափաղեան էֆէնտին . բուն խնդիրը Եզխարտոսի խնդիրն է՝ որ Մեսրոպ եպիսկոպոսի ժամանակէն շատ առաջ է և աղգային շահուց և իրաւանց կը վերաբերի : Պէտք է որ հոս գան թուղթերն , որպէս զի համադրինք թէ անձի՞ , շահուց թէ սկզբան խնդիր է , և անոնք որ պարագայներէն օգուտ քաղելով աղգային շահերն իւրացուցեր են՝ պարտաւոր են աղգին դարձունել իւր իրաւունքներն՝ որոնց պաշտպանութեանը համար դատախազ կանգնելու է Վարչութիւնն : 30—40 հազար ոսկւայ խնդիր մ'է այդ և խիստ կարեւոր . ուստի ես ալ կը

պահանջեմ որ ժողովոյս ներկայացուին այդ թուղթերը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Շնորհակալ եմ Փափաղեան էֆէնտիէն որ խօսեցաւ զոր ինչ պիտի խօսէի :

Մեսրոպ եպիսկոպոս դեռ Փահիրէ չգացած 69ին շատ բաներ անցած են հոն զորս շատ լաւ գիտեմ , վասն զի այն ատեն Վարչութեան մէջ էի : Այն ատեն կասկածներ եղան , ուստի հարկ անհրաժեշտ է որ պարզուի այս խնդիրն : Բայց մեր կը խնդրեմք որ հոս գայ խնդիրն և Վարչութիւնն շնորհ չընեն բերել դայն :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Այս խնդիրն հարկաւ ժողովոյս ատեանը պիտի ելնէ , բայց ի՞նչ կերպով : Գրիստոստուր էֆէնտի 1472 ոսկւայ խնդիրն կը յուզէ , Փափամաճեան էֆէնտին աւելի առաջ կանցնի և 10—20 տարուան խնդիրը կը յուզէ . պէտք է նախ զիրար հասկնալ : Ասկից առաջ եղած հարցումն Մեսրոպ եպիսկոպոսի խնդրոյն միայն կը վերաբերէր : Եթէ Գրիստոստուր էֆէնտին յուզուած չըլլար՝ իմ խօսքերս անշուշտ լաւ պիտի հասկնար : Ըսի թէ 1472 ոսկւայ խնդրոյն համար դատախազ կանգնած է Վարչութիւնը , և երբ խնդիր մը դատարանին կը յուզուի՝ պէտք է անոր արդեանցն ստասել : Մեսրոպ եպիսկոպոսին պաշտօնավարութեան մասին եղած ամբաստանութեան կէտն ալ ձգեցու էր Վարչութեան որ սերտէ դայն ու հոս բերէ : Իսկ գալով 10—20 տարուան 30—40 հազար ոսկւայ խնդրոյն , զայդ նոր կը խնդրէք և Վարչութիւնն առանց հետազօտելու առ այժմ բան մը չկրնար ըսել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութիւնն , ինչպէս ընցիր , Եզխարտոսի նկատմամբ յուզուած խընդիրն երեքի կը բաժնէ՝ հետեւեալ կերպիւ :

Ա. — 1472 ոսկւայ խնդիրն , որոյ համար կը յայտարարէ թէ դատախազ կանգնած է ինքն և խնդիրը դատարանին ներկայանալու վրայ ըլ-

լալով , դատաստանին արդեանց պէտք է ստասել :

Բ. — Մեսրոպ եպիսկոպոսին պաշտօնավարութեան խնդիրն , որոյ համար կըսէ թէ՛ սերտեալու պէտք ունի , և թէ՛ սերտելէն յետոյ պիտի բերէ ժողովոյս :

Գ. — Եզխարտոսի ընդհանուր խնդիրն , զոր իրեն յղեալ հարցման մասը չնկատեր , և՛ եթէ կուզէք՝ դայն ալ կը հետազօտեմ , կիմաստասիրեմ և կը բերեմ կըսէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — 1472 ոսկւայ խնդիրն դատարանին յանձնուած է եղեր , լաւ , ատոր ըսելիք չունինք հիմա . բայց կուզենք հասկընալ թէ Մեսրոպ եպիսկոպոս ի՞նչ պարագաներու մէջ Եզխարտոսի առաջնորդ ընարուեցաւ , և յետոյ ինչպէս եկաւ կը ըսեմք թէ շատ մը աղգային կալուածներ մասնաւոր անձանց սեպհականութիւն եղած են . իրրև երեսփոխան իրաւունք ունինք բացատրութիւն ուզելու . ուստի կուզեմ որ թուղթերն ժողովոյս ներկայացուին :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Այս վայրկեանին կը յարուցանէք այդ խնդիրը , զոր կրնամք հետազօտել և տեղեկագրել Ձեր ուզածն : Սակայն պէտք է համազուիք որ Վարչութեան եղած հարցումն ուրիշ բան չ'էր , այլ թէ ժողովս կուզէր գիտնալ որ Մեսրոպ եպիսկոպոսի խնդիրն ի՞նչ է : Վարչութիւնը կը պատասխանէ թէ՛ Մեսրոպ եպիսկոպոսին պաշտօնավարութեան միջոցին տեղի գտած ղեղձմանց խնդիր է , որ իրբեւ աղգային վիսաուց խնդիր՝ անշուշտ դատարանը միայն պիտի կրնայ պարզել :

ՋԱՅՆԵՐ. — Բաւական է . . . բուէ . . . բուէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք որ քիչ մ'առաջ ըրած ամփոփումս շատ ճիշդ էր . ուրովէտև Վարչութիւնն կըսէ թէ՛ այս խնդիրը մի բանի ճիւղերու կը բաժնուի , և թէ՛ ատոնց մին դատաստանաւ պիտի պարզուի , իսկ միւս


ները սերտելու պէտք ունի , որպէս զի անոնց վրայ ժողովոյս տեղեկութիւն բերել կարենայ :

Ուրեմն կը մնայ մեզ՝ կամ գոհ լինիլ Վարչութեան բացատրութենէն և ստասել որ տեղեկութիւնները պատրաստէ ու բերէ , և կամ ըսել թէ՛ իւր տուած բացատրութիւնները չեն գոհացներ զմեզ , և պահանջել որ Եզխարտոսի խնդրոյն վերաբերեալ թղթերն՝ առանց աչքէ անցնելու՝ բերէ թափէ մեր առջև :

Այս մասին ժողովին կամբը պիտի խընդրեմ :

Ատենապետ էֆէնտին ձեռամբարձ քուէ տալու կը հրաւիրէ Ղերեսփոխանս , որը մեծամասնութեամբ ԳՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵՆ Վարչութեան տուած բացատրութենէն , ի մասին Եզխարտոսի խնդրոյն , ստասելով որ անոր իւրաքանչիւր մասին վերաբերեալ տեղեկութիւնները պատրաստելով մատուցանէ ժողովին :

Օ Ր Ա Կ Ա Ր Ք



Ծրագիր Թաղային մատակարարութեան օրինաց . — Շարունակութիւն վիճաբանութեան ի վերայ Ատենապետաց Դիւանի տեղեկագրին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախորդ նստին՝ թաղային օրինաց ծրագրոյն առաջին եօթն յօդուածներն ընդունուեցան . այսօր ութերորդէն պիտի սկսինք : Կաղաչեմ Ատենապետին էֆէնտին որ շնորհ ընէ կարգալ ծրագրին 8.77 յօդուածը :

Ատենադպիր էֆէնտին կընթեանու .

Յօդ. 8. Թաղ. Ժողովն ամիսը մի-անգամ սովորական նիստ կընէ, դռն-բաց կամ դռնփակ :

Ասկից զատ՝ յարտասովոր նիստ կը գումարի :

Ա. Երբ Ժողովն օրակարգին մէջ խնդիր ունենայ .

Բ. Երբ Թաղ. Ժողովոյ դիւանը կամ Թաղ. Խորհուրդը պէտք տեսնեն և հրաւիրեն .

Գ. Երբ Ժողովականաց մեծամաս-նութիւնը գրով խնդրէ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ամիսը մի անգամ Թաղային Ժողով գումարելն պատշաճ չեմ համարիր, զի այն ատեն Թաղ. Ժողով-ներն Թաղ. Խորհրդոց աստիճանն իջած կըլ-լան : Տարին քանի մը անգամ կրնայ գումար-ուիլ, բայց ամիսը մի անգամն թէ՛ անպատեհ է և թէ՛ դժուարութիւններ ունի : Միւս տը-րամադրութիւններն կընդունիմ, և կառաջար-կեմ որ տարին երկու ամիս գումարուի քանի մը շաբաթ իրարու վրայ, աւելին շատ է :

ՊԵՏԻՐԵԱՆ Ա. ԷՖ. — Ես ալ պատշաճ չեմ դատեր ամիսը մէկ անգամ Թաղ. Ժողով գումարելն, և ոչ ալ արժան կը դատեմ որ հսկող և գործող մարմիններն մի և նոյն յար-կին մէջ ի խորհուրդ գումարին : Ես կառա-ջարկեմ որ Թաղ. Ժողովն երեք ամիսը մի անգամ գումարի :

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Ամիսը մի անգամ գումարումն՝ խիստ արդէկ գրուած է սովորական նիստերու համար, բայց միւս նիս-տերը Ժողովին դիւանը պէտք է հրաւիրէ, եր-

ինքն պէտք զգայ, և կամ երբ Ժողովականաց մեծամասնութիւնը կամ Թաղ. Խորհուրդը զը-րաւոր խնդրեն :

ՊԵՐՊԵՌԵԱՆ Ռ. ԷՖ. — Ես ալ շատ կը տեսնեմ ամիսը մի անգամ գումարումն : Աւելի յարմար կը գտնեմ վեց ամիսն անգամ մը գումարումն, և այն ալ Մայիս և Նոյեմբեր ամսոց սկիզբները . սա պայմանաւ որ Թաղա-յին Ժողովն շարունակէ իւր նիստերն, որչափ որ կը պահանջէ զայն իւր օրակարգը : Գարավ արտասովոր նիստերու, ասոնք ալ տեղի ու-նենան՝ երբ Ժողովոյ դիւանը կամ մեծամաս-նութիւնը խնդրէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — [Տեղեկարբեր] Ան-տեղի չէ այն դիտողութիւնն որով ամիսը մի անգամ գումարումն շատ կը տեսնեն . սակայն նկատողութեան տոնուելով թէ՛ Թաղ. Ժողովն յարաբերութիւն ունի Վարչութեան հետ՝ ա-միսը մի անգամ գումարումն յարմար դատ-ուեցաւ : Բնական է որ երբ ամիսը մի ան-գամ գումարուելու չափ խնդիր չունենայ Ժո-ղովը, նիստ չգումարեր : Բայց այն առաջար-կութիւններն՝ որով գումարումն երեք կամ վեց ամիսն մի անգամ ընել կուզուի, գործնական չեն . ինչ որ փորձուած է Աղջ. Ժողովին վը-րայ, պէտք չէ Թաղ. Ժողովոյ համար ալ այն-պէս նկատել : Կը տեսնէք որ ծրագրին գծած արամադրութեամբ Թաղ. Խորհուրդը պաշտօ-նէութեան կարգը կանցնի, որուն հսկող և համա-րառու մարմինը Թաղ. Ժողովն է . ուստի երբ Թաղ. Ժողովն երեք կամ վեց ամիսը մի ան-գամ գումարի, Թաղ. Խորհրդին վրայ վստա-հութիւնն ալ կը դողրի և կնճիռներ կը ծա-ղին : Ասոր համար ըստ է որ ամիսը մի ան-գամ գումարի . բայց երբ խնդիր չունենայ, ատեանը կը բռնայ, կը գոցէ :

Իսկ դաւով այն կէտին թէ՛ ո՛վ պիտի հը-րաւիրէ արտասովոր նիստերն, յայտնի բան է որ կամ Ժողովականաց մեծամասնութիւնը պի-

տի ուղէ զայն, կամ Դիւանը և կամ Թաղ. Խորհուրդն, և Դիւանը պիտի հրաւիրէ . իսկ երբ Ժողովոյ դիւանին և Թաղ. Խորհրդին մէջ անհամաձայնութիւն ծագի, այն ատեն Թաղ. Խորհուրդն ինք կը հրաւիրէ : Այսչափ բացատ-րութիւն բաւ կը կարծեմ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կուզէի գոհ լինիլ Տեղեկարբեր էֆէնտինի բացատրութենէն եթէ արտասովոր բառն աչքիս չգարնէր . ա-միսը մի անգամ նիստ ընելէն ետքը ի՞նչ հարկ կը մնայ արտասովոր նիստի : Գարձեալ պատ-շաճ չեմ դատեր, ինչպէս Պէշիրեան էֆէն-տին ալ յայտնեց, որ գործող և հսկող մար-միններն մի և նոյն յարկին տակ ընեն իրենց նիստերը . որովհետեւ այս կէտն ալ ունի իւր անպատեհութիւնները : Ես այնքան բռնաւոր-եալ չեմ տեսներ Թաղ. Ժողովն որ պէտք ունենայ ամիսը մի անգամ գումարուելու, և կառաջարկեմ որ հինգ անգամոց ստորագրու-թիւնն բաւական համարուի արտասովոր նիստ հրաւիրելու :

ՁԱՅՆԵՐ . — Քուէ՛, բուէ՛ :

Ատենապետ էֆէտի վիճարանութեան շա-րունակութեանը մասին Ժողովոյն կամքը կը հարցնէ, որ 3 ի դէմ 4 բուէով վիճարանու-թեան փակուիլը ԿՈՒՈՇԷ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ որում Ժողովը վիճարանութեան փակուիլը կորչէ, կամ իս-փեմ յայտնուած կարծիքներն : Եւ որպէս զի խնդիրը չչիփթի, սովորական և արտասովոր նիստերու վերաբերեալ առաջարկները կը զա-տեմ :

Պէշիրեան էֆէնտին երեք ամիսը մի ան-գամ գումարում առաջարկեց, և Պէրպէտեան էֆէնտին՝ վեց ամիսը մի անգամ : Այս երկու առաջարկներն ալ սովորական նիստերու հա-մար ծրագրին միամտեայ արամադրութիւնը փո-

խելու կը յանգին . ուստի նախ բարեփոխման սկզբունքը քուէի պիտի դնեմ, որպէս զի երբ ընդունուի, այնուհետեւ գումարման ժամանա-կըն որոշուի :

Զայս ըսելով Ատենապետ էֆէնտին կը հրա-ւիրէ զերեւոյթանս որ՝ Թաղ. Ժողովոյ սովո-րական նիստերու գումարման համար ծրագ-րին տրամադրած միամտեայ պայմանաժամը բարեփոխել ուղղունքն իրենց ձեռամբարձ հա-ւանութիւնն յայտնեն :

Ց Զեռք կամբառնան :

Նմանապէս կը հրաւիրէ որ ծրագրին մի-ամտեայ պայմանաժամը բարեփոխել չուզողնե-րըն իրենց կարծիքը յայտնեն :

16 Զեռք կամբառնան :

Եւ հետեւապէս Թաղ. Ժողովոյ սովորական նիստերուն՝ ըստ ծրագրին՝ ամիսը մի անգամ գումարուիլը ԿԸՆԴՈՒՆՈՒԻ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ կը մնայ Տոյ յօդուածին արտասովոր նիստերու կէտը :

ՊԵՐՊԵՌԵԱՆ Ռ. ԷՖ. — Եթէ Թաղ. Ժո-ղովն ամիսը մի անգամ պիտի գումարի, ես կառաջարկեմ որ շարունակէ իւր նիստերն ցապառումն օրակարգին, և արտասովոր նիս-տերու վերաբերեալ արամադրութեանց մէջէն ջնջեմք Թաղ. Խորհրդոյ հրաւերը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բայց եթէ Թաղ. Խոր-հուրդը խնդրէ և Թաղ. Ժողովոյ դիւանը մերժէ այն ատեն ի՞նչ ընել կուզէք :

ՊԵՐՊԵՌԵԱՆ Ռ. ԷՖ. — Թող համուէ մե-ծամասնութիւնը :

ՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Կարծեմ թէ երբ յօդուածին մէջ միամտեայ բառը կայ, արտա-սովոր բառին հարկ չմնար :

ԳԱՐԱԳԱՇ Ն. ԷՖ. — Եռսուֆեան էֆէն-
տին կըսէ թէ՛ քանի որ ամիսը մի անգամ
նիստ պիտի գումարէ թաղ ժողովն, արտասու-
վոր նիստերու հարկ չմնար : Ես խնդիրն այդ-
պէս չեմ ըմբռներ . որովհետեւ մեր ծրագրին
մէջ թաղ խորհրդէն առ թաղ ժողով յղուե-
լիք խնդիրներ կան , և կրնայ ըլլալ որ այս եր-
կուրին մէջ անհամաձայնութիւն գոյանայ , և
այն ժամանակ արտասովոր նիստ հարկ ըլլայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարծեմ թէ սա ձեռով
պիտի կրնաք համաձայնիլ ամենքդ ալ , երբ
ըսուի թէ՛ :

Յօդ. 8. Թաղ ժողովն ամիսը մի ան-
գամ կը գումարի , և իւր նիստերը կը շարու-
նակէ ցարտուումն օրակարգին :

Ասկից զատ՝ արտասովոր նիստ կընէ ,

Ա. Երբ թաղ ժողովոյ Դիւանը կամ
Թաղ խորհուրդը պէտք տեսնեն և հրաւիրեն :

Բ. Երբ ժողովականաց մեծամասնութիւնը
գրով խնդրէ : »

Եթէ առաջարկութեան տէրերը կը հա-
մաձայնին այս բարեփոխման , ժողովոյ քուէին
պիտի ենթարկեմ զայն :

Երեսփոխանաց լուծեան վրայ Ատենա-
պետ էֆէնտին քուէի կը դնէ ծրագրին ճշտ
յօդուածը՝ վերայիշեալ բարեփոխմամբ , բայց
24 ձայնից միտքանութիւն չգոյանալով , կը
յայտարարէ թէ որչափ ըստ օրինի չեղ-
եալ է , և յաջորդ նիստին պիտի մնայ ճշտ
յօդուածին քուէարկութիւնը : Սակայն երեսփո-
խանք միտքանելու միտում յայտնելով՝ կը խնդ-
րեն որ քուէարկութեան փորձը կրկնուի : Հե-
տեւապէս Ատենապետ էֆէնտի կրկնել կու-
տայ քուէարկութեան փորձն , և այս անգամ
ժողովը՝ 24 ձայնից միտքանութեամբ՝ կը ՆԻՈՒ-
նի ծրագրին ճշտ յօդուածը վերայիշեալ բարե-
փոխմամբ :

Ատենադպիր էֆէնտին կընթեանու Գրչ
յօդուածն , որ է .

Յօդ. 9. Թաղ ժողովը՝ անտուկին
եղմացոյցը սահմանելու առեն՝ պարտի-
ի նկատի առնուլ կրթական օրինաց տը-
րամագրութիւնքն , և ըստ այնմ իւր թա-
ղին վարժարանաց յատկացնել կրթու-
թեան պատկանեալ հասոյթներն . որոց
հիմ պէտք է բռնուի՝ թաղային անտուկի
բովանդակ հասութից առ նուազն 60 օճը :

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Այս յօդուածին
մէջ 40 օճ պիտի հակառակի կրթական ծը-
րագրին , որովհետեւ տեղ կայ ուր 40 օճն ա-
ւելի , և կայ ալ՝ ուր պակաս պիտի կրնան տալ .
ընդհանուր թաղերու համար միօրինակ այդ
թիւը սահմանել ազկ չէ . ուստի կառաջար-
կեմ որ վերցուի այն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այդ թիւն բա-
ցարձակ սահման մը չէ , կրնաք զայն փոխել
բայց պէտք չէ վերցնէք . վասն զի ատով ժո-
ղովուրդը ստիպելու է որ թաղին անտուկին
հասութից հարկերն այսչափը կրթութեան պի-
տի յատկացուի : Այդ ժողովը պէտք է որ
այս օրէնքը դնէ , և քանի որ առ նուազն ըս-
ուած է , 40 օճ՝ շատ տուողներուն դէմ ար-
գելք մը չի նկատուի՝ գոնէ բիշ տալ ուղղուե-
լուն համար ստիպում մ'է :

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Կարծեմ այս ի ընդ-
րոյն աեզը հոս չէ . այս մասին կրթական ծը-
րագրոյն մէջ պէտք է վիճարածիլ : Եթէ բոլոր
թաղերը նկատողութեան առնուք՝ պիտի
տեսնենք որ մեծապոյն մասը կրնայ տալ . Ես
չատ թաղեր տեսած եմ որ միւս պաշտօնէից
համար կը զլանայ ստակ տալ , բայց վարժարա-
նին համար կուտայ . կան նաև թաղեր որ
հարկերն 60-70 ալ կուտան , թէև թաղեր ալ

կը գտնուին որ 30-35 անգամ չեն կարող տալ
թաղ ալ կայ որ 50 օճ պարտուց տոկոսին կու-
տայ : Ուստի իմ առաջարկս է՝ չէ թէ փոխել ,
այլ բոլորովին վերցնել այդ թիւն այս ծրագրին
մէջէն , և կրթական ծրագրին մէջ նկատողու-
թեան առնուլ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Մելիքեան էֆ. ի
տուած բացատրութենէն իմացաք որ թաղերն
ընդհանրապէս կարող են իրենց հասութից 40
օճ կրթութեան համար տալու , և թէ թա-
ղեր ալ կան՝ որ 50 օճ պարտուց տոկոսին
յատկացուցած են . տարակոյս չկայ որ եթէ
այդ թաղերը փոխառութիւն ըրած են կալ-
ուած շինելու համար , բնականաբար իրենց
կալուածներէն եկամուտ ունին , որով կրնան
վճարել իրենց պարտքը : Երբ մարդ մը ելնէ
և մեծ նուէր մը տայ իւր թաղին , այդ նուէ-
րը մասնաւոր նպատակի մը համար կը տրուի
ընդհանրապէս , և սովորաբար կալուածի մը կը
յատկանայ , որ մշտնջենապէս հասոյթ կը բե-
րէ : Բայց սովորական հասոյթէն որոշեալ մաս
մը պէտք է տրուի կրթութեան համար : Հա-
ւաստի եղիք որ խիստ բիշ թաղ պիտի տեսնէք
որ չկարենայ իւր հասութից հարկերն քառա-
սունը տալ : Ուստի կը խնդրեմ՝ որ առաջին
անգամ փորձ մ'ընելու համար ժողովս այս
օրէնքն հրամայէ . հող չէ 40ը 30ի իջեցուցէր ,
բուական է որ ամեն թաղ պարտաւոր ըլլայ
տալ այդ գումարը :

ՄԱԳՊՈՒԼԵԱՆ Է. ԷՖ. — Ես ալ կառա-
ջարկեմ վերցնել այդ թիւն այս ծրագրէն և
կրթական օրէնքին մէջ խնդիր ընել . Կրթա-
կան և Տնտեսական Խորհրդականները պիտի
զիտնան անշուշտ թաղ . Խորհրդոց պիտածէնե-
րէն թէ իւրաքանչիւր թաղ իւր հասութից որ-
չափը կրնայ յատկացնել վարժարանաց :

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Կը տեսնեմ որ
Փախազեան էֆէնտին սկզբան խնդիր կը յա-

րուցանէ . նա չպնդեր ծրագրին մէջ նշանակ-
ուած գումարին քանակութեանը վրայ , այլ կը
պահանջէ որ գումար մը սահմանուի դաստի-
արակութեան համար : Բայց նկատելու է որ
թաղեր կան , որք 60 օճ վճարելու կարողու-
թիւն ունենալով՝ չպիտի ուղեն այնչափ տալ ,
երբ տեսնեն թէ 40 օճ որոշուած է վարժա-
րանին համար : Ուստի կառաջարկեմ որ անց-
նինք այս կէտն առանց գումար որոշելու և
կրթական ծրագրոյն մէջ նկատողութեան առ-
նուք :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Կրթական
կամ Տնտեսական Խորհրդականը իւրաքանչիւր
թաղին յարմար որոշումներ պիտի կրնայ ընել
եղեր , ըս . բայց և այնպէս այդ կէտը դար-
ձեալ բաց թողու չէ , և նուազապոյն գումար
մը դնելու է այս օրէնքին մէջ , որպէս զի
Թաղ ժողովները հասկնան թէ ասանկ պարտք
մը ունին վճարելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք որ Գրչ
յօդուածին վերջին տողերուն բարձումն առա-
ջարկողներ եղան , որք տեսութեամբ կը տար-
բերին թէև իրարմէ , բայց առաջարկութիւնին
միևնոյն բանն է . ուստի մի որ նոյն յօդուա-
ծոյն վերջին տողերն , որք 40 օճ կը յատկա-
ցնեն , բաձուլ կուղէ , թող հաճի իւր ձեռ-
նածիղ հաւանութիւնն յայտնել :

Տուք երեսփոխանք այդ տրամադրու-
թիւնն Գրչ յօդուածին մէջէն վերցնելու իսկ
երկու երեսփոխանք ալ՝ ծրագրին յօդուածը
նոյնութեամբ պահելու համար քուէ կուտան :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին կը
յայտարարէ թէ՛ երկու կարծիքներն ալ օրինաց
պահանջած թիւը չունենալով , որոշումը չեղ-
եալ կը համարուի և յաջորդ նիստին կը մնայ :

Գ. Բացակայութիւն

Ատեանը կը գոցուի ժամ 5 1/2 ին, 8 օրէն գումարուելու որոշմամբ, օրակարգ ունենալով թաղային օրինաց վիճաբանութեան շարունակութիւնը :

Ատեանը փակելու ժամն հասած ըլլալով, Ատենապետ էֆէնտի կը դադրեցնէ թաղային օրինաց ծրագրին վիճաբանութիւնն, և Ժողովոյն կը ներկայէ Գ. բացակայութիւն ունեցող երեսփոխաններն, որք են

Ատենաղպիր

Ատենապետ

Մ. Յ. Մէլիֆեան

Յ. Մէրեքիճ-Գոնի

Տ. Խորէն Եպիս. Նար-պէյ
Միջայէլ էֆ. Մովսէս :

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգային Ժողովոյ

Ղալաթիոյ թաղեցւոց կողմանէ ներկայ 1880 ի բացման Բրդ. նստին Ազգային Ժողովոյ մատուցեալ Հանրագիրն որ ԺԴ րդ. նստին յղուեցաւ առ Դիւանն Յարաբերութեան ի նախաքննութիւն :

Ձեր Դիւանն ի քննին առնելով զայն տեսաւ թէ այդ բողոքագրով թաղեցիք կը պահանջէին որ Ազգ. Ժողովս ջնջելով իւր անցեալ 1879 ի բացման ԺԴ րդ. նրստին ըրած որոշումն, կրկին իրենց վերադարձնէր Ղալաթիոյ կալուածոց մատակարարութիւնը :

Ձեր Յարաբերութեան Դիւանն փութաց սոյն որոշման վերաբերեալ բոլոր պարագաներն նկատողութեան առնուլ, և հետեւաբար այն նստին Ատենադրութիւնն ինչպէս նաև բոլոր պաշտօնական և վարչական դրութիւններն աչքէ անցուց :

Իւր ստացած տեղեկութեանց մէջ Ձեր Դիւանն նկատեց թէ՛

Ազգ. Ժողովոյն 1879 ի բացման ԺԴ. նստի որոշումն նախորդ որոշման մը կըրկնութիւնն էր :

Թէ՛ Ղալաթիոյ մէջ ժամանակաւ գրեթէ թաղեցի մնացած չըլլալուն համար վարչական որոշմամբ Ղալաթիա մասնաւոր թաղ ըլլալէ դադարած էր :

Թէ՛ վերջերս այս թաղին ընտրական իրաւունքը՝ մասնաւոր պայմանաւ իրեն

վերադարձած էր, այսինքն, այդ թաղին հասոյթը եկեղեցին դիմող ուխտաւորաց և պանդուխտ գաւառացւոց նուէրներէ գոյացած ըլլալով, ուրիշ թաղերու օրինակ չէր կրնար ըլլալ. և իւր թաղային վարժարանը եկեղեցւոյն սովորական հասոյթով պիտի հոգար, և եթէ այն չը բաւեր առ ժամանակեայ կերպով մաս մը կալուածոց հասութէն նպաստ պիտի ստանար :

Եւ թէ՛ վերջապէս Ազգ. Ժողովը Ղալաթիոյ նորակառոյց վարժարանին չէնքն և անոր յատկացեալ կալուածներն Ազգ. կեդրոնական սեպհականութիւն համարելով՝ անոր մատակարարութիւնը Ազգ. Վարչութեան մասնաւոր հսկողութեան ներքև, կեդրոնական բարձրագոյն վարժարան մը հաստատելով, թէ թաղեցին, թէ Պօլսեցին և թէ ընդհանուր գաւառացին հաւասարապէս պիտի օգտէին անտի : Հետեւաբար Ձեր Դիւանն դիտելով, թէ արդէն այդ վարժարանն ու կալուածներն թաղին սեպհականութիւն ըլլալէ դադարած են, կեդրակայէ՛ թաղեցւոց հանրագիրը նկատողութեան չառնուլ, և իւր նախորդ որոշումն հաստատելով անցնիլ իւր օրակարգին :

Ատենապետ և Տեղեկաբեր
Յարաբերութեան Դիւանի
Մ. ՉՕՂԱՆԵԱՆ
Ն. ՕՏԵԱՆ ՍԵՊՈՒՆ ԹԻՐԱՊԵԱՆ
1881 Մարտ 26



ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. — Յետաձգում վաւերացման նախընթաց նիստի ատենագրութեան .
2. — Հրաժարագիր Լօղօֆէթ Էֆէնտի Պալեօղեանի .
3. — Գիր Տ. Յովհաննէս քահանայի Մկրեան .
4. — Հարցում Գաթիամանեան Մինաս Էֆէնտի Ամասիոյ խնդրոյն նկատմամբ .
5. — Հարցում Տ. Մատթէոս եպիսկոպոսի Եզմիրլեան .
6. — Գատարակութեան վերաբերեալ տեղեկագիր ի Մէլիտինէէ .
7. — Առաջարկութիւն Ատեփան Էֆէնտի Փափագեանի .
8. — Տեղեկագիր Յարարերութեան դիւանին Ղալաթիոյ թաղեցւոց Աս Աղգ. Ժողովն մատուցած հանրագրոյն մասին .
9. — Պատասխանի Ղարչութեան Ալիլիկիոյ կաթողիկոսական խնդրոյն նըկատմամբ .
10. — Պատասխանի Ղարչութեան Եզիպտոսի խնդրոյն նկատմամբ :

ՕՐԱԿԱՐԳ

Ա. — Ծրագիր թաղային մատակարարութեան օրինաց . — Շարունակութիւն վիճարանութեան ի վերայ Ատենապետաց դիւանի տեղեկագրին :

Գ. Բացակայութիւն :

Գլխ 2 դրոշ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ՍԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի Է. Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ
Եկեղեցւոյ իրանկայը Է. Հայ գրավաճառաց քով